

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ
ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐՍԵՆ ՀՐԱՆՏԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՏԱՐԱՃՔՆԵՐԻ
ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳՃԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

ԺԸ .00.01 - «Ճարտարապետությունը և նախագիտությունը ամբ
ճարտարապետության թեկնածուի գիտական աստիճանի
հայցման առեկախությունը և նախագիտությունը»

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2016

МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ И НАУКИ РЕСПУБЛИКИ
АРМЕНИЯ

НАЦИОНАЛЬНЫЙ УНИВЕРСИТЕТ АРХИТЕКТУРЫ И
СТРОИТЕЛЬСТВА АРМЕНИИ

АВЕТИСЯН АРСЕН ГРАНТОВИЧ

**АРХИТЕКТУРНО-ПЛАНИРОВОЧНЫЕ ПРОБЛЕМЫ
ТЕРРИТОРИЙ ВЫСОКОЙ ГРАДОСТРОИТЕЛЬНОЙ
ЦЕННОСТИ ГОРОДА ЕРЕВАНА**

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени
кандидата архитектуры по специальности 18.00.01 -
"Архитектура"

ԵՐԵՎԱՆ 2016

Ատենախոսությունը թեման հաստատվել է Երևանի ճարտարապետություն և շինարարություն պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝
Թեկնածու, պրոֆեսոր

ճարտ.

Պաշտոնակատարող նախագահ

Ա.Ա. Ալոյան :
ճարտ. դոկտոր,
պրոֆեսոր
Մ.Ա. Գասպարյան,
ճարտ. թեկնածու
Ն.Ա. Ավետիսյան :

Առաջատար կազմակերպություն՝

«Երևաննախագիծ» ՓԲԸ :

Պաշտպանությունը կայանալու է 2016թ. մայիսի 16-ին, ժամը 15:00-ին ճարտարապետություն և շինարարություն Յայաստանի ազգային համալսարանին կից գործող ՀՀ ԲՈՅՀ-ի «ճարտարապետություն և շինարարություն» 030 մասնագիտական խորհրդի նիստում, հետևյալ հասցեով՝ 0009, ք.Երևան, Տերյան փ., 105:

Ատենախոսությունը կարելի է ծանոթանալ ՃՀԱՀ-ի գիտական գրադարանում, հետևյալ հասցեով՝ 0079, ք.Երևան, Մառի փ., 17/1:

Սեղմագրին կարելի է ծանոթանալ ՃՀԱՀ-ի պաշտոնակատարչության կայքում՝ www.nuaca.am

Սեղմագիրն առաքված է 2016թ. ապրիլի 15-ին :

Մասնագիտական խորհրդի գիտական քննողը՝

ճարտարապետություն թեկնածու, ~~դոկտոր~~

Ս.Ա. Թովմասյան

Тема диссертации утверждена в Ереванском государственном университете архитектуры и строительства

Научный руководитель :
архитектуры, профессор

кандидат

Алоян А.А.

Официальные оппоненты :
архитектуры, профессор

доктор

Гаспарян М.А.,
кандидат
архитектуры
Аветисян Н.А.


Ведущая организация: ЗАО
"Ереванпроект".

Защита состоится 16-го мая 2016г. в 15:00 часов на заседании Специализированного совета 030- "Архитектура и строительство" ВАК РА, действующего при Национальном университете архитектуры и строительства Армении, по адресу: 0009, г.Ереван, ул.Теряна, 105.

С диссертацией можно ознакомиться в научной библиотеке НУАСА по адресу: 0079, г. Ереван, ул.Марра, 17/1.

С авторефератом можно ознакомиться на официальном сайте НУАСА: www.nuaca.am

Автореферат разослан 15-го апреля 2016г .

Ученый секретарь Специализированного совета:
кандидат архитектуры, доцент 
Товмасян С.А.

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թե մայի արդիականությունը

Երևանի քաղաքաշինական զարգացման ներկայացված ներկայում, երբ հիմնականում ամառնորդվելով մեծածավալ ներդրումային ծրագրերով՝ քաղաքը կառուցապատվում և կերպափոխվում է արագ տեմպերով, ամառնում է տարաբնույթ տարածքներին՝ մասնավորապես ամանձին կառուցվածքահատակագծային հանգույցներին քաղաքաշինական արժեքը բնորոշող ճարտարապետականախագծային գործունեությունը բազմակողմանիորեն հաշվի առնելու անհրաժեշտությունը:

Հաճախ չհիմնավորված քաղաքաշինական միջամտության են ենթարկվում քաղաքի պատմականորեն ձևավորված տարածքները, ինչի արդյունքում խախտվում են կարևոր կառուցվածքահատակագծային հանգույցները, վերացվում են մշակութային և պատմական արժեքներ կայացնող ճարտարապետական հուշարձաններ: Գործընթացը հանգեցնում է քաղաքի տարածքներին որակական և քանակական կերպափոխման և քաղաքաշինական արժեքի նվազմանը:

01.08.2003թ.-ի «ՀՀ պետական քաղաքաշինական կադաստր» I-2.03-03 ՀՀԾՆ-ի համաձայն՝ տարածքի քաղաքաշինական արժեքը հասարակության կողմից տարածքի վիճակին և դրա օգտագործմանն ամառնորդող որոշակի պահանջները բավարարելու՝ տվյալ տարածքի հնարավորությունը չափել է, իսկ գործող «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» 30-01-2014 ՀՀԾՆ-ը սահմանում են դրա ձևավորման վրա ազդող գործոնները: Գործնականում տարածքի քաղաքաշինական արժեքը որոշվում է փորձագիտական գնահատման միջոցով, որը չունենելով հստակ հաշվարկային մեթոդաբանություն՝ ոչ միշտ է օբյեկտիվ: Ակնհայտ է, որ քաղաքի հետագա ճարտարապետահատակագծային զարգացման կանոնակարգման և քաղաքաշինական գործունեության կառավարման նպատակով անհրաժեշտ է տարածքի քաղաքաշինական արժեքի որոշման մեխանիզմների կատարելագործում, ինչպես նաև նոր մեթոդների և գործիքակազմի ներդրումը:

Երևանում քաղաքաշինական բարձրարժեք տարածքները պահպանման խնդրի արդիականության մասին է վկայում 2013թ. «Երևանի փոքր կենտրոնի կառուցապատման մասին» ՀՀ օրենքի հայեցակարգի ընդունումը: Դրա հիմնական նպատակն է՝ իրավական հենքի ստեղծման միջոցով նախանշել Երևանի զարգացման ընթացքում փոքր կենտրոնի բարձրարժեք ճարտարապետական կերպարի միասնականության, կառուցապատման գեղագիտական միջավայրի կատարելագործման, առողջ և գրավիչ կենսամիջավայրի ձևավորման ապահովումը՝ խնդրոն առարկա տարածական գոտու ամանձնահատկություններին քիչ հատուկ և լրացուցիչ պայմանների ու սահմանափակումների ամրագրման միջոցով: Հայեցակարգի համաձայն՝ «Փոքր կենտրոն»-ի և դրա անմիջական ազդեցության (բուֆերային) գոտիների սահմաններում ընդգրկված տարածքն անհրաժեշտ է ամանձնացնել որպես ազգային կարևորություն ունեցող քաղաքաշինական գործունեություն հատուկ կարգավորման օբյեկտ, որի սահմանագծերը նախատեսվում է սահմանել ՀՀ կառավարության որոշմամբ:

Վերջին տարիներին ՀՀ կառավարության որոշումներով Երևան քաղաքում ամանձնահատկության կարգով՝ որպես քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտներ են ամանձնացվել հանրապետական նշանակության միջարք վարչական շենքեր և համալիրներ: Սահմանվել են նաև քաղաքամերձ համայնքների հետ սահմանակից հատվածներում քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների ամանձնացման հնարավորությունները: Տարածքի քաղաքաշինական արժեքը հաշվի է առնվում նաև տարածական պահպանման փաստաթղթերի մշակման գործընթացում: Սակայն ժամանակը ցույց տվեց, որ նշված կարգավորման միջոցները բավարարչեն քաղաքաշինական բարձրարժեք տարածքների պահպանումը լիարժեքորեն ապահովելու համար:

Միջարք երկրներում կարևորվում է քաղաքաշինական բարձրարժեք տարածքների պահպանման և զարգացման հարցը, որը կարգավորվում է օրենքով սահմանված կարգով: Դեռևս 1962 թ.-ից Ֆրանսիայի քաղաքներում կառավարության կողմից ամանձնացվում են «Պահպանվող սեկտորներ» (Secteur

Sauvegardé), որոնց զարգացման և կառուցապատման համար սահմանվում են օրենսդրական և ֆինանսական կարգավորման մեխանիզմներ: Դանիայում գործող «Միջավայրում ճարտարապետական արժեքի տեղեկագիրը» (Survey of the Architectural Value in the Environment – SAVE) շինությունների կամ համալիրների պահպանման նպատակով դրանց գնահատման մեթոդակարգ է: «Ազգային կարևորություն տարածքներ և նախագծեր» (Spaces and Projects of National Importance – SAPONI) նախաձեռնությունն պատակը Շվեյցարիայի տարածքային նախագծման ապագա մարտահրավերների ուսումնասիրությունն ու տարածքային զարգացման հեռանկարներին մշակումն է:

Երևանի ճարտարապետության և քաղաքաշինությունների վերաբերյալ ուսումնասիրությունները կատարել են Զ.Խալպախյանը, Մ.Գասպարյանը, Է.Յարությունյանը՝ քաղաքի պատմական զարգացման վերաբերյալ, Ս.Թովմասյանը՝ տարածական պլանավորման հիմնահարցերի առնչությամբ, Ա.Ալոյանը, Ս.Քալաշյանը, Ն.Պետրոսյանը և Չ.Մամյանը՝ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման խնդիրների վերաբերյալ, Յու.Սաֆարյանը, Գ.Ռաշիդյանը և Կ.Ազատյանը առանձին քաղաքային հանգույցների ճարտարապետության վերաբերյալ, Ս.Օհանյանը, Յ.Առուստամյանը և Կ.Բերբերյանը՝ քաղաքի կենտրոնի քաղաքաշինական խնդիրների և քաղաքային միջավայրի պահպանման և արդիականացման վերաբերյալ: Ընդհանուր առմամբ խոշոր քաղաքների ձևավորման և քաղաքաշինական զարգացման վերաբերյալ ուսումնասիրությունները տեղ են գտել Կ.Լիսի, Կ.Գլազիչևի, Ա.Գուտնովի աշխատություններում: Քաղաքի հատակագծային կառուցվածքի և կենսագործունեության միջև կապի ուսումնասիրությունները կատարել են Վ.Կրիստալլերը, Բ.Յիլլերը, Ջ.Յանսենը, Մ.Բետտին, Բ.Ջիանգր, Ա.Տյորները և ուրիշները:

Այդուհանդերձ, կատարված ուսումնասիրություններում տարածքի քաղաքաշինական արժեքը չի դիտարկվել որպես առանձին ուսումնասիրություն առարկա: Տվյալ հետազոտությունն անդրադարձնում է քաղաքի նախագծման և կառուցապատման գործընթացներում տարածքի քաղաքաշինական արժեքի հաշվի առնման, գնահատման և ներդրման միջոցների մշակմանը:

Հե տազ ո տո լ թ յ ան **ն պատակ ն** **Է՝** Երևանի
 քաղաքաշինական բարձրարժեք տարածքներին
 զարգացման միտումներին և
 առանձնահատկություններին ուսումնասիրություն
 հիման վրա, մշակել մոտեցումներ և տալ
 համապատասխան առաջարկություններ տարածքներին
 քաղաքաշինական արժևորման մեթոդներին
 կատարելագործման, կանոնակարգման և
 ռեզուլտերացման ուղղություններ:

Հե տազ ո տո լ թ յ ան հիմնական խնդիրներն են.

- դուրս բերել քաղաքաշինական բարձրարժեք
 տարածքներին ժամանակակից
 առանձնահատկությունները և զարգացման արդի
 միտումները Հայաստանում և արտերկրում,
- ուսումնասիրել քաղաքաշինական բարձրարժեք
 տարածքներին բաղադրիչները, կազմավորման
 հիմնական օրինաչափությունները և պայմանները,
 արդիականացման և զարգացման հիմնական
 գործոնները և չափանիշները,
- բացահայտել քաղաքաշինական բարձրարժեք
 տարածքներին փոխակերպման
 օրինաչափությունները Երևանի զարգացման
 տարբերփուլերում,
- մշակել տարածքի քաղաքաշինական արժեքի
 գնահատման չափանիշներ և քանակական արժևորման
 հաշվարկային մեթոդներ,
- տալ քաղաքաշինական բարձրարժեք տարածքներին
 ճարտարապետահատակագծային կանոնակարգման և
 կայուն զարգացման գիտականորեն հիմնավորված
 առաջարկություններ:

Հե տազ ո տո լ թ յ ան մեթոդիկան

- Գրականություն, արխիվային և նախագծային
 նյութերի, օրենսդրական և նորմատիվային ակտերի
 ուսումնասիրություն և վերլուծություն և,
 արտերկրի և տեղական փորձի
 ուսումնասիրություն և,
 վերլուծություններ, համեմատական
 հետազոտություն և,
 համակարգային վերլուծություն,
- Տրամաբանական և մաթեմատիկական
 մոդելներին մշակում:

Յե տազ ո տո ւ թյ ան առարկ ան ն եր առ ու մ է երևանի քաղաք աշի նակ ան բարձր արժեք տարածք ների ճարտարապետահատակագծային խնդիր ներքը, դրանց արժևորման և պահպանման միջոց ներքը :

Յե տազ ո տո ւ թյ ան սահման ներ ն ընդգրկ ու մ են երևանի ամբողջ տարածքը՝ 19-րդ դարի կեսից մինչ օրս ընկած ժամանակահատված ու մ, ինչպես նաև տվյալ ու լ ո Ր տո ւ մ միջ ազգային փորձը :

Յե տազ ո տո ւ թյ ան գիտակ ան ն ո Ր ո ւ յ թը

Սահմանվել են տարածքի քաղաքաշինակ ան արժեքի համալիր գնահատման չափանիշ ներքը, դրանց հիմնակ ան բն ու թ ազ ր եր ը և գնահատման ամբողջակ ան համակարգը :

Մշակվել և առաջադրվել է երևանի տարածք ների քաղաքաշինակ ան արժեքի համալիր գնահատման մեթոդաբան ու թյ ու ն՝ ի լ Ր ու մ ն գ ո Ր ծ ո ղ փորձ ա գի տակ ան գ ն ա հ ա տ մ ան մ ե թ ո ղ ի :

Մեթոդաբան ու թյ ան կիրառմամբ կազմվել է երևանի տարածք ների քաղաքաշինակ ան արժեքի քարտեզ : Ել ն ել ո վ դրանից՝ առաջարկվել են լ Ր ա գ ու գ ի չ քաղաքաշինակ ան և օրենսդրակ ան կարգավորման միջոց ներ :

Առաջարկվել են տարածքի քաղաքաշինակ ան արժեքի ո Ր ո շ մ ան համալիր գնահատման մեթոդաբան ու թյ ան կիրառման ուղղ ու թյ ու ն ն եր քաղաքի նախագծման և կառ ու գ ապատման գ ո Ր ծ ը ն թ ա գ ն եր ու մ :

Պաշտպան ու թյ ան ե ն ն եր կ այ ա գ վ ու մ .

- տարածքի քաղաքաշինակ ան արժեքի գնահատման մեթոդաբան ու թյ ու ն ը ,
- երևանի տարածք ների դասակարգ ու մ ն ը ս տ քաղաքաշինակ ան արժեքի ,
- քաղաքաշինակ ան բարձր արժեք տարածք ների պահպանման և զարգացման մեթոդ ներքը ,
- գիտակ ան ո Ր ե ն հիմնավորված առաջարկ ներ և հանձնարարակ ան ն եր քաղաքաշինակ ան բարձր արժեք տարածք ների քաղաքաշինակ ան և օրենսդրակ ան կարգավորման մեթոդ ների կատարելագործման վերաբերյալ :

Աշխատանքի գործնակ ան նշանակ ու թյ ու ն ը

Հետագոտությունը կարող է հիմք հանդիսանալ տեղական ինքնակառավարման մարմիններին կողմից իրականացվող քաղաքաշինական գործունեության և երևանի զարգացման ընթացքում տարածքի քաղաքաշինական արժեքի պահպանման և աճի ապահովման համար:

Ուսումնասիրության արդյունքները կարող են կիրառվել ինչպես երևան քաղաքի նախագծային փաստաթղթերի մշակման գործընթացում այնպես էլ համալսարանական դասախոսություններում: Ուսումնասիրության արդյունքները ներդրված են ՃՀԱՀ-ի «Ճարտարապետություն» մասնագիտության մագիստրական ուսումնական ծրագրում, որպես «Գիտության տեսություն և գիտահետազոտական աշխատանքներին մեթոդաբանություն» առարկայի բաղկացուցիչ մաս:

Աշխատանքի փորձահավանությունը

Աշխատանքի հիմնական դրույթները քննարկվել են «Ճարտարապետության և շինարարության արդի հիմնախնդիրները» 7-րդ միջազգային գիտագործնական գիտաժողովում 2015թ. (Ֆլորենցիա), ՃՀԱՀ-ի Ճարտարապետության տեսության, պատմաճարտարապետական ժամանակության վերականգնման և վերակառուցման, գեղեցիկ արվեստի և պատմության ամբիոնում 2015, 2016 թթ.:

Հրատարակումներ

Ատենախոսության թեմայով հրատարակված է 5 գիտական հոդված:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը

Ատենախոսությունը բաղկացած է տեքստային և գրաֆիկական մասերից՝ ներկայացված մեկ հատորով: Աշխատանքի ընդհանուր ծավալը կազմում է 133 էջ՝ ներածություն, երեք գլուխ, եզրակացություններ, հրատարակված աշխատանքների և 107 անուն օգտագործված գրականության ցանկ: Գրաֆիկական մասը բաղկացած է 28 պաստառից, որոնք ներառում են գծագրեր, գրաֆիկներ, լուսանկարներ, սխեմաներ, աղյուսակներ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում տրվել են աշխատանքի արդիականությունը, նպատակը, խնդիրները, հետազոտման մեթոդիկան, գիտական նորությունը, գործնական նշանակությունը, հրատարակումները, ատենախոսություն կառուցվածքը և ծավալը:

**ԳԼՈՒԽ 1. ՏԱՐԱԾՔԻ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԿԱՆ ԱՐԺԵՔԻ
ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄԵՎ ԱՐՏԵՐԿՐՈՒՄ**

Ուսումնասիրվել են տարածքի քաղաքաշինական արժեքը բնորոշող տեղային և արտերկրի գործոնները, չափորոշիչները, ինչպես նաև արժեքի գնահատման արդի մեթոդները և քաղաքաշինական գործունեության կարգավորման միջոցները:

Ներկայումս գործող «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» 30-01-2014 ՀՀԾՆ-նամրագրում է Հայաստանում տարածքի քաղաքաշինական արժեքի սահմանումը և արժեք ձևավորող գործոնները: Արտերկրի քաղաքաշինական նախագծման հիմնական ուղղությունները նույնպես նամրագրում են գործոններ, որոնք միտված են բնակության համար բարենպաստ քաղաքային տարածքների կազմավորմանը: Ստորև ուսումնասիրվել են հայրենական պրակտիկայում արդի նախագծային գերակա ուղղությունների հիմնադրույթները և ներդրման

ՀՀ-ում գործող նորմերով և արդի քաղաքաշինական տեսությունում պրակտիկայում սահմանված տարածքի քաղաքաշինական արժեքի գործոնների համեմատական վերլուծությունը ի հայտ է բերում միջարքը նդհանրություններ: ՀՀ-ում գործող նորմերով սահմանված տարածքի քաղաքաշինական արժեքի ձևավորման համար անհրաժեշտ գործառնական բազմազանությունը, փողոցային ցանցի խտությունը և մատչելիությունը բնորոշ են նաև «Նոր քաղաքաշինություն», «Կոմպակտ քաղաք», «Խելացի աճ» ուղղություններին: ՀՀ-ում գործող նորմերը՝ փողոցային ցանցի վերաբերյալ սահմանում են ինժեներական և տրանսպորտային մայրուղային ցանցերի խտություն, «Կոմպակտ քաղաք» տեսությունը՝ փողոցային ցանցի բարձր խտություն, իսկ «Նոր քաղաքաշինություն» տեսությունը սահմանված է փողոցային ցանցի կապակցվածությունը: Գործառնական

բազմազանություն հետ կապված՝ գործող նորմերով սահմանված է հասարակական նշանակություն ունեցող օբյեկտներով հագեցվածություն, «Նոր քաղաքաշինություն» տեսությունը սահմանված է բազմաֆունկցիոնալություն և բազմազանություն, «Կոմպակտ քաղաք» տեսությամբ խառը հողօգտագործում: Միևնույն ժամանակ առկա են գործունեություն միտված բնակություն համար քարտեզագրության մասնաբաժնի ձևավորմանը, որոնք հնարավոր է ամրագրել 30-01-2014 ՅՅԾՆ-ով սահմանված տարածքի քաղաքաշինական արժեքի որոշման գործունեության ցանկում: Կայուն զարգացման, հետիոտն հասանելիության, բնակելի ֆոնդի տեսակային բազմազանության ապահովումը արտերկրի նախագծային գործունեության հիմնախնդիրներից են: Սահմանված է, որ կայուն քաղաքը պետք է ունենա քայլելու, հեծանվավազքի և հասարակական տրանսպորտի համար համապատասխան մասշտաբ և սոցիալական փոխարարությունների փառանգող կոմպակտ կառուցվածք: Առկա է նաև այլ սահմանում, ըստ որի կայուն քաղաքը կարող է լինել բազմակենտրոն և ունենա փոխկապակցված տրանսպորտային ցանց:

Այսպիսով, արդի չափանիշներին բավարարող քաղաքային տարածքների կազմավորումը ապահովելու նպատակով տարածքի քաղաքաշինական արժեքի որոշման մեթոդաբանություն մշակումը, տեղային և արտերկրի նախագծման պրակտիկայի հիման վրա, առաջնային անհրաժեշտության խնդիր է հայրենական քաղաքաշինական գործունեության մեջ: Ըստ վերոնշյալ գործունեության, տարածքի քաղաքաշինական արժեք ձևավորող տարրերի գործող նորմերով ամրագրված ցանկի լրամշակումը հնարավորություն կտա ընդլայնել գործող սահմանման շրջանակները և կատարել տարածքի ավելի ընդգրկուն արժևորում:

Միևնույն ժամանակ ըստ առկա և առաջարկվող չափանիշների, տարածքների գնահատման համար պահանջվում են համապատասխան մեթոդներ՝ դրանց հիման վրա տարածքի քաղաքաշինական արժեքի որոշման մեթոդաբանություն սահմանման նպատակով: Գործող փորձագիտական գնահատման մեթոդը՝ չունենալով հաշվարկի հստակ եղանակներ, տարածքների ճշգրիտ գնահատումը ըստ միևնույն սանդղակի դարձնում է անհնարին: Այնինչ

համակարգչային նախագծման և վերլուծության արդի տեխնոլոգիաները հնարավորություն էն տալիս կատարել տարածքի բազմակողմանի ուսումնասիրություն և գնահատել՝ ինչպես դրա քաղաքաշինական արժեքը, այնպես էլ հաշվարկել տարածքում նախատեսվող ճարտարապետաշինարարական փոփոխությունների գրեթե բոլոր հնարավոր հետևանքները:

Ըստ սահմանված գործոնների, տարածքի քաղաքաշինական արժեքի գնահատման նպատակով ուսումնասիրվել են քաղաքային տարածքների վերլուծության հիմնական տեսությունները, դրանց դրույթների գործնական կիրառման արդի մեթոդները և գործիքակազմը՝ հայրենական պրակտիկայում դրանց կիրառման ուղիների բացահայտման նպատակով:

Արտերկրի փորձի ուսումնասիրության արդյունքում ամանձնացվել են քաղաքային ձևաբանության վերլուծության հիմնական՝ «ծավալ-հող», «կապ» և «վայր» տեսությունները: Դրանց միջոցով հնարավոր է կատարել քաղաքային տարածքների արժևորում և դասակարգում ըստ քաղաքաշինական արժեքի: Նշված տեսություններին հիման վրա քաղաքային միջավայրում վերլուծության ունեցող գործարկման և չափումների իրականացման հիմնական միջոցներ են ընդունվել տարածքային սինտեքսը, որը ներառում է կապերի և իզոպլիստների վերլուծության ունեցող մեթոդները, աշխարհագրական տեղեկատվական համակարգերը (ԱՏՀ), որոնք ներառում են ցանկացած տարածքի բաղկացուցիչ տարրերի տվյալների բազաներ, վերլուծության ունեցող մեթոդներ և գործիքակազմ:

Ուսումնասիրվել են նաև արտերկրի և հայրենական քաղաքաշինական զարգացման կարգավորման միջոցները՝ դրանց համեմատական վերլուծության և վերջիններիս գնահատման նպատակով: ՀՀ-ում քաղաքաշինական զարգացման կարգավորման հիմնական միջոցը բնագավառի օրենսդրական և քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերն են: Դրանցից բացի, քաղաքի տարբեր հանգույցների ամանձնահատկություններին ցել նեղով, սահմանված են նաև լրացուցիչ կարգավորման միջոցներ, որոնք հիմնվելով վերջիններիս վրա, իրավական հենքի ստեղծման միջոցով, ապահովում են որոշակի տարածքի բնական ու

զարգացումը: Նման կարգավորման միջոցներից են 19.11.1998թ. «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և պատմական միջավայրի պահպանման և օգտագործման մասին» ՀՀ օրենքը, ՀՀ կառավարության 26.06.2009թ. հ.792 «Քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների տարածքներում քաղաքաշինական գործունեության իրականացման կարգը հաստատելու մասին» որոշումը, 07.03.2013թ. հ.9 «Երևանի փոքր կենտրոնի կառուցապատման մասին» ՀՀ օրենքի հայեցակարգը:

Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ գործող միջոցները բավարարչեն մայրաքաղաքի քաղաքաշինական բարձրարժեք տարածքների կառուցապատումը լիարժեք կարգավորելու համար: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ քաղաքի կենտրոնից դուրս նույնպես ամկա են քաղաքաշինական տեսակետից արժեքներ կայանող տարածքներ, «Երևանի փոքր կենտրոնի կառուցապատման մասին» ՀՀ օրենքի հայեցակարգի օրինակով անհրաժեշտ է սահմանել նաև մյուս վարչական շրջաններում ամկա քաղաքաշինական բարձրարժեք տարածքների պահպանման միջոցներ:

Արտերկրի քաղաքաշինական զարգացման հայեցակարգերի մշակման գործընթացում հատկապես կարևորվում է ճարտարապետական և քաղաքաշինական ժառանգության պահպանման հարցը: Ֆրանսիայի «Պահպանվող սեկտորները», Դանիայի «Միջավայրում ճարտարապետական արժեքի տեղեկագիրը» քաղաքի զարգացման ընթացքում պատմական միջավայրի պահպանման և քաղաքաշինական գործունեության կարգավորման միջոցներ են: Հաշվի առնելով Երևանի համար խնդրի հրատապությունը՝ ուսումնասիրված կարգավորման միջոցների հիմնական դրույթներին՝ շենքերի և տարածքների պատամշակության արժևորման, կառուցապատման կարգավորման գոտիների կազմման, կիրառման ուղիների բացահայտումը և դրանց ներդրումը հայրենական պրակտիկայում հնարավորություն կտա կարգավորել հարցը:

Բնականոն քաղաքաշինական զարգացում ապահովելու նպատակով անհրաժեշտ է կատարել տարածքի քաղաքաշինական արժեքի գնահատումը ստ համապատասխան գործունեության՝ համալիր մեթոդներով

կիրառմամբ, ապա և ներդնել տարածքի քաղաքաշինական արժեքի պահպանման և աճի ապահովման միջոցներ:

**ԳԼՈՒԽ 2. ԱՐԺԵՔ ԶԵՎԱԿՈՐՈՂ ԶԱՂԱՔԱՅԻՆ
ԿԱՌՈՒՑՎԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԻԵՐԻ ՎԵՐԼՈՒՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ԱՐԺԵՎՈՐՈՒՄԸ**

Ուսու մնասիրվել են տարածքի քաղաքաշինական արժեքի հիմնական չափանիշները և գործոնները: Դրանց հիման վրա դուրս են բերվել տարածքի քաղաքաշինական արժեքի քաղադրիչները և սահմանվել են արժևորման համապատասխան մեթոդներ՝ ըստ քաղադրիչների կենտրոնացման և հասանելիության: Գնահատման արդյունքների համադրմամբ նախատեսվում է սահմանել տարածքի քաղաքաշինական արժեքը:

Տարածքի քաղաքաշինական արժեքի քաղադրիչներ են սահմանվել .

- տարրեր՝
 - պատմաճարտարապետական և մշակութային արժեքներ կայացնող օբյեկտներ և տարածքներ,
 - համաքաղաքային նշանակություն ունեցող և համալիրներ,
 - կառուցվածքահատակագծային և հորինվածքային հանգույցներ,
 - բնական համակարգեր և շրջակամիջավայր,
- կապեր՝

○ փողոցատրանսպորտային ցանց:
Ըստ սահմանված քաղադրիչների խմբերի, գնահատումն իրականացվել է առաջին գլխում ուսու մնասիրված տեսությունների վրա հիմնված մեթոդների կիրառմամբ: Գնահատման տարրերի կարևորությունից ելնելով՝ ձևակերպվել են նաև ստացված արդյունքների համադրման և տարածքի քաղաքաշինական արժեքի որոշման մեթոդներ:

Քաղաքաշինական բարձրարժեք տարածքների պահպանումը ապահովելու նպատակով ուսու մնասիրվել է դրանց կազմավորման ընթացքը, փոխակերպումը քաղաքի ընդարձակման տարբեր փուլերում, ինչպես նաև բացահայտվել են ներկայիս և անցյալի քաղաքաշինական արժեք ձևավորող գործոնները և դրանց փոփոխությունները:

Ատենախոսություն շրջանակներում պատմական վերլուծություն ժամանակագրական սահմաններն

ընդունվել են 1856-2015թթ.: Մինչ այդ ձևավորված քաղաքաշինական արժեքներկայացնող հանգույցները նույնպես հաշվի են առնվել որպես արժեք ձևավորող տարրեր, սակայն չի ուսումնասիրվել դրանց ձևավորման և կերպափոխման պատմական ընթացքը: Ժամանակագրական վերլուծության ընդունված փուլերն են.

- I փուլ - 1856-1924 թթ.,
- II փուլ - 1924-1951 թթ.,
- III փուլ - 1951-1971 թթ.,
- IV փուլ - 1971-2005 թթ.,
- V փուլ - 2005-2015 թթ.:


Ժամանակագրական սահմանները և բաժանումը պայմանավորված են երևանի գլխավոր հատակագծի նախագծերի հաստատման, պահպանված տեղագրական հանույթների, ներկա պահպանված միջավայրի ժամանակագրական շերտավորման տարբերով:

Քաղաքաշինական բարձրարժեք տարածքների փոխակերպման օրինաչափությունները բացահայտելու նպատակով դուրս են բերվել երևանի զարգացման տարբեր փուլերի քաղաքաշինական արժեքներկայացնող տարածքները, ուսումնասիրվել են՝ դրանց բաղադրիչների կառուցվածքային և հատակագծային առանձնահատկությունները, քաղաքի փողոցային ցանցի ընդարձակմամբ, հատակագծային կառուցվածքի փոփոխություններով, քաղաքաշինական գործունեությունամբ և ժամանակի սոցիալ-տնտեսական երևույթներով պայմանավորված փոփոխությունները՝ կազմված գրաֆային մոդելների վերլուծման միջոցով: Քաղաքային տարածքները դասակարգվել են ըստ կապերի և քաղաքաշինական արժեքներկայացնող տարրերի, որոնց համադրման միջոցով սահմանվել է քաղաքաշինական բարձրարժեք տարածքների կետորոնացման աստիճանը միավորմակերեսի համար քաղաքի զարգացման տարբեր փուլերում (նկ.1): Կազմվել է նաև տարբեր քաղաքաշինական արժեքի տարածքների հաշվեկշիռ:

Ուսումնասիրվել են քաղաքաշինական դոմինանտների և պատմական հանգույցների կառուցվածքային արժեքի փոփոխությունները՝ պայմանավորված քաղաքի փողոցատրանսպորտային ցանցի ընդարձակմամբ: Արդյունքների համեմատական վերլուծության միջոցով հաստատվել է կապը

Ներկայիս և անցյալի քաղաքաշինական բարձրարժեք տարածքների միջև: Ներկայիս Երևանի տարածքների քաղաքաշինական արժեքի որոշման շրջանակներում՝ քաղաքի տարածքները գնահատվել և դասակարգվել են ըստ սահմանված բաղադրիչների՝ կապերի և տարրերի:

Ըստ տարրերի գնահատման, առավել ազույն արժեքավոր տարածքները հիմնականում տեղակայվել են Կենտրոն վարչական շրջանի սահմաններում, այնինչ փոդոցային ցանցի կառուցվածքային գնահատումների՝ ինտեգրվածություն, միջանցիկություն և հասանելիություն առավել ազույն արժեքները տեղաբաշխվում են քաղաքի գրեթե բոլոր վարչական շրջաններում: Ըստ առանձին բաղադրիչների գնահատման արդյունքները հնարավոր է բերել ընդհանուր համեմատականի, դրանց կարևորությունն իրար համեմատելով, իրացուցիչ գործակիցների ներդրման միջոցով, ինչի շնորհիվ և որոշվել է Երևանի տարածքների քաղաքաշինական արժեքը և կազմվել են ցածր, միջին և բարձր արժեքի գոտիները:



Նկ.1. Երևանի քաղաքաշինական բարձրարժեք տարածքների կենտրոնացման քարտեզները՝ քաղաքի զարգացման տարբեր փուլ էրոլմ


Ուսումնասիրությանը ցույց է տվել, որ տարածքի քաղաքաշինական արժեք ձևավորող գործոնները միմյանցից անկախ շարունակաբար փոփոխվում են: Երևանի պարագայում քաղաքաշին տարածքների գործառական հագեցվածության աճը ներկայումս էլ շարունակվում է նախկինից ավելի մեծ ինտենսիվությամբ: Միևնույն ժամանակ, տարածքի պատմական արժեքի նվազումը, սկիզբ առնելով 1950-ական թվականներից, ներկայումս էլ

կրում է շարունակական բնույթ: Քաղաքի որևէ մեկ արժեք ձևավորող գործոնի աճը չի նպաստում տարածքի քաղաքաշինական արժեքի ավելացմանը: Ուստի անհրաժեշտ է դուրս բերել արժեք ձևավորող այն գործոնները, որոնք ներկայումս գրանցում են նվազման միտում, և համապատասխան մեխանիզմների կիրառմամբ ապահովել դրանց պահպանումը:


Գնահատելով ներկայիս ներդրումային գրավչությունը՝ ակնհայտ է, որ շնորհիվ կենտրոնի քաղաքաշինական բարձր կարգավիճակի՝ 1991թ.-ից հետո նոր սեփականության իրավունքի պայմաններում, այն աճում է քաղաքի մյուս վարչական շրջանների համեմատ: Չնայած այն հանգամանքի, որ վերջիններս նույնպես կառուցապատվում են տարատեսակ հասարակական սպասարկման օբյեկտներով, համալիր կառուցապատման հայեցակարգերի բացակայության պայմաններում չի ապահովվում դրանց քաղաքաշինական արժեքի աճը:

**ԳԼՈՒԽ 3. ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ
ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼ ԱԳՈՐԾՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ
ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Երևան քաղաքի տարածքները դասակարգվել են ըստ բացահայտված տարածքի քաղաքաշինական արժեքի բաղադրիչների (տարրեր, կապեր): Արդյունքում կազմվել են տարբեր քաղաքաշինական արժեքավորող այն (բարձր, միջին, ցածր) գոտիների և քաղաքաշինական բարձրարժեք տարածքների կենտրոնացման (բարձր, միջին, ցածր) քարտեզներ (նկ. 2, 3):



Նկ.2. Երևանի տարածքների տարբեր քաղաքաշինակալարժեքավորող առտիների քարտեզ



Նկ.3. Երևանի քաղաքաշինակալարժեքարժեքային տարածքների կենտրոնացման քարտեզ

Ըստ տարածքի քաղաքաշինակալարժեքի, դուրս են բերվել դրանց խնդիրները և սահմանվել են կարգավորման համապատասխան հայեցակարգային ուղղություններ: Ցածր քաղաքաշինակալարժեքի տարածքները ցածր կառուցվածքային արժեքի հանգույցներում տեղակայված և արժեքի տարբեր չպարունակող տարածքներ են: Միջին քաղաքաշինակալարժեքի տարածքները առանց համապատասխան տարրերի, սակայն բարձր կառուցվածքային արժեքի հանգույցներում տեղակայված տարածքներ են, որոնք կարող են հիմք հանդիսանալ քաղաքի համաչափ զարգացման մոդելի մշակման համար: Այդպիսի հանգույցներ են միջանցիկության, ինտեգրվածության և հասանելիության բարձր արժեքի և կենտրոնից առավել մատչելի հասանելիության տարածքները: Դրանք առկա են քաղաքի յուրաքանչյուր վարչական շրջանում, և դրանց միջև մատչելի տրանսպորտային և հետիոտն կապերի ձևավորումը կապահովի տարածքի հետագա զարգացումը: Քաղաքաշինակալարժեք տարածքները արժեքի սահմանված տարրեր պարունակող կամ դրանց կենտրոնացման վայրերն են, որոնք կարող են նաև տեղակայվել բարձր կառուցվածքային արժեքի հանգույցներում: Չաշվի

առնելով քաղաքաշինական բարձրարժեք տարածքներին արժեքի նվազման ներկայիս միտումը՝ դրանց քաղաքաշինական արժեքի պահպանումն ու զարգացումն անհրաժեշտ է իրականացնել ավելի կատարելագործված մեխանիզմների ներդրման միջոցով:

Գնահատման արդյունքների հիման վրա տրվել են առաջարկներ երևանի քաղաքաշինական բարձրարժեք տարածքների պահպանման, զարգացման և արժևորման ուղղությամբ: Առաջարկները վերաբերում են գործող նորմերին, տարածական պլանավորման փաստաթղթերի կազմին և մշակման մեթոդներին: Առաջարկվել են նաև քաղաքաշինական բարձրարժեք տարածքների կարգավորման և րացուցիչ միջոցներ, որոնք կարող են ամրագրվել տարածական պլանավորման փաստաթղթերում և օրենսդրական կարգավորման միջոցներում:

Երևանի տարածքների քաղաքաշինական արժեքի պահպանման և աճի ապահովման նպատակով անհրաժեշտ է կատարել հետևյալ ևրացումները 30-01-2014 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» ՀՀՇՆ-ում.

- տարածքի քաղաքաշինական արժեքը ձևավորող գործոնների ցանկը ևրացնել՝ պատմաճարտարապետական և մշակութային արժեքներ կայացնող օբյեկտներով ու տարածքներով, համաքաղաքային նշանակություն օբյեկտներով և համալիրներով, կազմավորված կառուցվածքահատակագծային և հորինվածքային հանգույցներով, բնական համակարգերով և շրջակամիջավայրով,
- մանրամասնել հասարակական նշանակություն օբյեկտներով հագեցվածություն հասկացությունը՝ սահմանել քաղաքաշինական արժեք ձևավորող հասարակական նշանակություն օբյեկտների ցանկը,
- ինժեներական ենթակառուցվածքների խտությունից բացի, սահմանել նաև՝ ինտեգրվածություն, միջանցիկություն, հեռացվածություն չափումներով որոշվող փողոցի կառուցվածքային արժեքի հասկացությունը՝ տարածքի քաղաքաշինական արժեքի որոշման նպատակով,


- դուրս բերել ներդրումային գրավչություն ան առաջացման պատճառները:

Սահմանել տարածքի քաղաքաշինական արժեքի համալիր գնահատման մեթոդաբանությունը: Քաղաքային տարածքների գնահատման ներկայացված մեթոդաբանությունը հնարավորություն է տալիս, տարածքների արժևորման ընդունված փորձագիտական գնահատումից բացի, կատարել նաև ճշգրիտ համալիր հաշվարկային գնահատում:

Քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի կատարելագործման առաջարկվող ուղղությունները ներառում են.

- գլխավոր հատակագծի և գոտևորման նախագծերի մշակման՝ նպատակային և գործառնական գոտիների կազմման, կառուցապատման հարկայնության և խտություն տեղաբաշխման և փորձաքննության մեթոդներ,
- վարչական շրջանների համաչափ քաղաքաշինական զարգացման և կառուցապատման չափորոշիչների մշակման մեթոդներ,
- քաղաքաշինական նախագծման և վերլուծություններին իրականացման մեթոդաբանության և գործիքակազմի կատարելագործման առաջարկներ:

Առաջարկվում է քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի՝ գլխավոր հատակագծի և գոտևորման նախագծերի մշակման բոլոր մակարդակներում կիրառել տարածքի քաղաքաշինական արժեքի քարտեզը (նկ. 4):



**Ն Կ . 4 . Ե Ր Լ Ա Ն Ո Լ Մ Ե Պ Ա Ր Ծ Ե Կ Կ Ա Ն Ա Վ Ո Ր Մ Ա Ն
 Վ Պ Ա Ս Ե Պ Ա Յ Ո Ւ Թ Յ Ե Ր Ի Մ Զ Ա Կ Մ Ա Ն Գ Ո Ր Ժ ը Ն Թ Ա Գ Ո Լ Մ Ե Պ Ա Ր Ծ Ե Ք Ի
 Ք Ա Ղ Ա Ք Ա Չ Ի Ն Ա Կ Ա Ն Ա Ր Ժ Ե Ք Ի Ք Ա Ր Մ Ե Գ Ի Կ Ի Ր Ա Մ Մ Ա Ն Մ Ո Ղ Ե Լ**

Գ Լ խ ա վ ո Ր հ ա տ ա կ ա գ ծ ի և գ ո տ լ ո Ր մ ա ն ն ա խ ա գ ծ Ե Ր Ի
 մ շ ա կ մ ա ն , փ ո ղ ո ց ա յ ի ն ց ա ն ց ի զ ա Ր զ ա ց մ ա ն և
 ը ն դ Լ ա յ ն մ ա ն ո Լ ղ ի ն Ե Ր Ի ք ա ց ա հ ա յ տ մ ա ն փ ո Լ Լ Ե Ր Ո Լ Մ
 հ ա մ ա պ ա տ ա ս խ ա ն վ Ե Ր Լ ո Լ ծ ո Լ թ յ ո Լ ն ն Ե Ր Ի գ ո Ր Ժ ա Ր Կ ո Լ մ ը
 հ ն ա Ր ա վ ո Ր ո Լ թ յ ո Լ ն կ տ ա ա Ր Ժ և ո Ր Ե Լ ն ա խ ա գ ծ ա յ ի ն
 Լ ո Լ ծ ո Լ մ ն Ե Ր ը : Ո Լ ն Ե ն ա Լ ո վ հ ա մ ա պ ա տ ա ս խ ա ն
 տ վ յ ա Լ ն Ե Ր ա մ կ ա փ ո ղ ո ց ա յ ի ն ց ա ն ց ի հ ա ն գ ո Լ յ ց ն Ե Ր Ի
